

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ  
PHILOLOGY  
ФИЛОЛОГИЯ

ՀՏԴ՝ 89.09

DOI: 10.52971/18294316-2024.27.2-57

ՈՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ «ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ» ՎԻՊԱԿԻ  
ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՉՆԵՐԸ

*Արա Ս. Զարզարյան*

ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՀ

**Ամփոփում**

Նախարան. Մի տոհմի առասպել է «Որդան կարմիր» վիպակը, որում ներկայացվում է Լևոն պապի տոհմի առասպելը: Հենց այս տոհմի առասպելում է Ռուբեն Հովսեփյանն ընդգծում իր պատումի բազմայուժետային առանձնահատկությունները, իր գաղափարները: «Որդան կարմիր» վիպակը սյուժետային և գաղափարական առումով ուղղակիորեն կարծես շարունակությունը լինի «Հայոց թաղ» վիպակի: Մեթոդներ և նույթեր. Աշխատանքում կիրառվել են զուգադրական, հոգեբանական, հոգեվերլուծական և կենսագրական մեթոդներ: Իրականացվել է նաև հեղինակի տարբեր ստեղծագործությունների միջև համեմատություն: Վերլուծություն. Հոդվածում ուսումնասիրվել են հատկապես վիպակի խորդանիշները: Դրանցով ցույց են տրվել ստեղծագործությունում առկա ուղերձը, ինչպես նաև հեղինակի գաղափարների գեղարվեստականացումը: Արդյունքներ. «Որդան կարմիր» վիպակում Ռուբեն Հովսեփյանը որդանի խորհրդանիշով ընդգրծում է բարդ պատմական ժամանակաշրջանում արդեն իսկ կործանման եզրին կանգնած արժեքների պահպանման անհրաժեշտությունը: Տոհմական պատմության հիմքում ազգ-տոհմ զուգահեռն է: Տոհմի ողբերգական պատմությունը սույկ տոհմական պատմություն չէ, այլ ազգային ողբերգության արձանագրում: Մերունդների պատմության համատեքսուում ընդգծվում է ազգային պատմությունը: Խորհրդանիշները վիպակի հիմքն են: Ազգային-տոհմական առասպելի ներքին ծալքերում հայ մարդու հարատևման գաղտնիքներն ու բանալիներն են, որը տրվում է Լևոն պապի կերպարով:

**Բանալի բառեր:** Ռուբեն Հովսեփյան, որդան կարմիր, տոհմ, առասպել, հայրենիք, ընտանիք, խորհրդանիշ:

Ինչպես հղել՝ Զարգարյան Ա. Ռուբեն Հովսեպյանի «Որդան կարմիր» վիպակի գեղարվեստական, գաղափարական ուղերձները, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Հ. 2 (27): 57-67էջեր: DOI:10.52971/18294316-2024.27.2-57

## THE ARTISTIC AND IDEOLOGICAL MESSAGES OF RUBEN HOVSEPYAN'S NOVEL "ARMENIAN COCHIENAL"

*Ara S. Zargaryan*

Institute of Literature named after M. Abegyan of NAS, Yerevan, RA

### **Abstract**

**Introduction:** The novel "Armenian Cochineal" is a myth of a dynasty, in which the myth of grandfather Levon's dynasty is presented. It is in this dynasty myth that Ruben Hovsepyan emphasizes the multi-plot features of his story, and his ideas. In terms of plot and ideology, the novel "Armenian Cochineal" seems to be a direct continuation of the novel "Armenian District".

**Methods and materials:** Comparative, psychological, psychoanalytic and biographical methods were used in the work. A comparison between different works of the author was also carried out.

**Analysis:** In the article the keywords of the novel were studied in particular. They showed the message in the work, as well as the fictionalization of the author's ideas. **Results:** Ruben Hovsepyan uses the symbol of the worm in the novel "Armenian Cochineal" to emphasize the need to preserve values that are already on the verge of destruction in a difficult historical period. At the heart of tribal history is the nation-tribe parallel. The tragic history of the clan is not just a clan history, but a record of a national tragedy. National history is emphasized in the context of generational history. Symbols are the foundation of the novel. In the inner folds of the national-dynastic myth are the secrets and keys to the survival of the Armenian man, which is given in the image of grandfather Levon.

**Key words:** Ruben Hovsepyan, Armenian cochineal, lineage, race, homeland, family, symbol.

**Citation:** Zargaryan A., The Artistic and Ideological Messages of Ruben Hovsepyan's Novel "Armenian Cochineal"//“Scientific Works” of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 2 (27). 57-67pp.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-57

## ХУДОЖЕСТВЕННО-ИДЕОЛОГИЧЕСКИЕ ПОСЛАНИЯ РОМАНА РУБЕНА ОВСЕПЯНА «АРАРАТСКАЯ КОШЕНИЛЬ»

*Արա Ս. Զարգարյան*

Институт литературы имени М. Абегяна НАН, Ереван, РА

### **Аннотация**

**Введение:** Роман «Армянская кошениль» представляет собой миф о династии, в котором представлен миф о династии деда Левона. Именно в этом мифе о династии Рубен Овсепян подчеркивает многосюжетные особенности своей истории, акцентирует свои идеи. С точки зрения сюжета и идеологии роман «Армянская кошениль» представляется прямым продолжением романа «Армянский район». **Методы и материалы:** В работе использовались сравнительные, психологические, психоаналитические и биографические методы. Также прово-

дилось сравнение между разными произведениями автора. *Анализ:* В статье, в частности, изучались ключевые слова романа. Они показали посыл в произведении, а также беллетристику идей автора. *Результаты:* Рубен Овсепян использует символ червя в романе «Армянская кошениль», чтобы подчеркнуть необходимость сохранения ценностей, которые уже находятся на грани уничтожения в сложный исторический период. В основе племенной истории лежит параллель нация-племя. Трагическая история клана — это не просто история клана, а летопись национальной трагедии. Национальная история подчеркивается в контексте истории поколений. Символы — основа романа. Во внутренних складках национально-династического мифа — секреты и ключи к выживанию армянского человека, которое дано в образе деда Левона.

**Ключевые слова:** Рубен Овсепян, армянская кошениль, родословная, раса, родина, семья, символ.

**Как цитировать:** Заргарян А. *Художественно-идеологические послания романа Рубена Овсепяна «Армянская кошениль».* // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 2 (27). 57-67 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.2-57

**ՆԱԽԱԲԱՆ.** 1980 թ. լույս է տեսնում Ռուբեն Հովսեփյանի «Որդան կարմիր» վիպակը [3]: Վիպակը հրատարակվում է հեղինակի «Հայոց թաղ» վիպակի տպագրությունից ուղիղ 10 տարի անց: Եթե ժամանակագրությամբ ենք դիտում, ապա «Հայոց թաղ» վիպակի տպագրությունից անցել էր մոտ մեկ տասնամյակ, ինչը ստեղծագործական տեսանկյունից բավական մեծ ժամանակ է արձակագրի համար, սակայն գեղարվեստական, գաղափարական համատեքստում Հովսեփյանի սույն վիպակը կարծես մասսամբ շարունակությունը լինի «Հայոց թաղ» վիպակի: Այս համատեքստում «Որդան կարմիր» վիպակի քննությունն ու վերլուծությունը բնականաբար զուգահեռվելու են «Հայոց թաղ» վիպակի հետ: Զարկ է նշել, որ Հովսեփյանի «Ճիշ» [4], «Հայոց թաղ» և «Որդան կարմիր» վիպակները գրողի գեղարվեստական ու գաղափարական համակարգի եռամիասնական օրինակն է: Ստեղծագործություններին բնորոշ են սյուժետային, գաղափարական, խորհրդանշային նմանությունները, թափառող կերպարների մոդելը: Վերոնշյալ երեք ստեղծագործություններից հատկապես ամենամեծ զուգահեռներն ու միասնական համակարգի կրողներն են «Հայոց թաղ» և «Որդան կարմիր» վիպակները: Տասնամյակը կամ մեկ սերնդի ժամանակային անցումը արտացոլվում է նաև վիպակներում: Եթե «Հայոց թաղ» վիպակի դեպքում նկատելի էին Ռուբեն Հովսեփյանի ստեղծագործական փնտրությունները, գրական-գեղարվեստական հավատամքի կառուցումը, ապա «Որդան կարմիր» վիպակում տասնամյակն արդեն իսկ ընդգծում է կայուն ու հստակ բանաձևը: Այն հիմք է դառնում արձակագրի գեղարվեստական ստեղծագործությունների համար, ինչպես նաև արծարծում է ժամանակաշրջանի հայ արձակի գրական-գեղարվեստական թեմաները:

**Թափառող կերպարներն ու խորհրդանիշները «Հայոց թաղ»**

**և «Որդան կարմիր» վիպակներում**

1979 թվականին Հայաստանում տպագրվում է Գաբրիել Գարսիա Մարկեսի «Հարյուր տարվա մենություն» վեպը [6]: Վեպի հայերեն առաջին թարգմանությունը կատարում է արձակագիր Ռուբեն Հովսեփյանը: Մոզական ուսալիզմի գրական ժանրով գր-

ված ստեղծագործությունը մեծ ազդեցություն է ունենում թարգմանչի՝ գեղարվեստական մտահորիզոնի վրա: Վեպի վերջում տպագրվում է նաև թարգմանչի վերջաբանը, որում Ռուբեն Հովսեփյանի մի շարք մտքերը ճանապարհ են հարթում հասկանալու համար արձակագրի այդ ժամանակաշրջանի գեղարվեստական, գաղափարական ընկալումները: Վերջաբանում Հովսեփյանը ընդգծում է իր և Մարկեսի գաղափարական ընկալումների նմանությունը, կամ Մարկեսի վեպի, գաղափարական աշխարհի ուղղակի ազդեցությունն իր «Որդան կարմիր» վիպակին: Հովսեփյանը մասնավորապես զրում է գրողի կողմից իրական աշխարհում ապրելու և իրականության կանոնների խախտման մասին: Այլ կերպ ընդգծվում է մոգական ռեալիզմի ժանրի իր ընկալումները. «Իսկական գրականության շարժիչ ուժը Կարուն է, Սերը և այդ զգացողություններն ուրիշին հաղորդելու անզուսպ պահանջը: Իսկական գրողը իրականության ընտրություն չի կատարում: Իրականությունը նրա ներսում է այնքանով, որքանով նա ընդունակ է ընկալելու իրականությունը: Գրողի կյանքի ամեն օրը, ամեն պահը չէ, որ տպավորություններ է կուտակում: Գրողի ամեն տարիք չէ, որ տպավորություններ ընկալելու նույն սրությամբ է օժտված: Մանկության մի քանի տարին մեկի համար գուցեն այնքան իիստ է բնակեցված տպավորություններով, որ կրավականացնի ողջ կյանքում»: [6, Էջ 439] Հոդված-վերջաբանում Հովսեփյանը ընդգծում է նաև մոգական ռեալիզմի մշակութաբանական հիմքերի և ստեղծման անհրաժեշտության մասին: Նա խոսում է ռեալիզմի և մոգական ռեալիզմի սահմանագծի, ինչպես նաև վերջինիս ստեղծման անհրաժեշտության մասին. «Երևակայության ազատ ճախրանքի կոչ է սա, որին շտապել է առաջինը հետևել ինքը՝ Գարրիել Գարսիա Մարկեսը»: [6, Էջ 445-446] Մարկեսի վեպի վերջաբան-հոդվածով Ռուբեն Հովսեփյանը ընդգծում է իր երևակայության ազատ ճախրանքի մասին: Եթե «Ճայոց թաղ» վիպակում այդ ճախրանքը երերացող էր, չկար հստակություն, ապա մոգական ռեալիզմը և իրականության մասնակի ընտրությունը հստակ տեսնում ենք «Որդան կարմիր» վիպակում: Այդ գործում մոգական տարրը իրականության միջավայրի բնական մաս է կազմում: Վիպակի գլխավոր կերպարը՝ Լևոն պապը, ապրում է սերոնեւերունդ: Հյուսվում է մի սոհիմի պատմություն, որում առկա է իրականությունն ու առասպելը: Խոսելով Մարկեսի վեպի ազդեցության մասին՝ հարկ է նշել այուժետային նմանությունները կամ այս դեպքում նույնիսկ ուղղակիորեն ազդեցությունը: Այս վիպակով Ռուբեն Հովսեփյանը կարծես Մարկեսի Կոլումբիան սինթեզում է իր Հայաստանին: Մարկեսի վեպի անվերնագիր, պայմանական առաջին երեք գլուխներում ներկայացվում է մի խումբ մարդկանց վերաբնակեցման ու սոցիալական գարգացման մասին: Խոսվում է սերունդների կողմից մենության հատկանիշների ժառանգականության մասին: Մարկեսի վեպի սուժեի հիմքում հերոսների տառապանքն է միայնության մեջ և երբեմն նաև միայնությունից դուրս: Ներկայացվում է նույն սոհիմի տարբեր սերունդների պատմությունը: Իսկ վեպի բնակավայրը՝ Մակոնդոն, անջատված է աշխարհից, ժամանակից և իրադարձություններից: Այն պտտվում է ինքն իր ներսում: Եթե մի պահ այս մի քանի նախարարությունից հանենք Մարկեսի անունը, ապա տպավորություն կստեղծվի, որ ներկայացվում է Ռուբեն Հովսեփյանի «Որդան կարմիր» վիպակի սուժեն: Հայ արձակագիրը, իր հերթին ազդվելով Մարկեսից, զրում է իր պատմությունը:

Տոհմական իր պատմության մասին Ռուբեն Հովսեփյանը գրում է. «Չեմ թաքցնում՝ ես շատ եմ ուզում, թեկուզ անկատար, թերի, թողնել իմ սովորի առասպելը, որը երկար, հրաշալի մի օր է՝ հազար թելերով կապված անցած օրերի հետ, երեսը դեպի եկող օրերը»: [3, էջ 6] Հազար թելերով կապված մի տոհմի առասպել է «Որդան կարմիր» վիպակը, որում ներկայացվում է Լևոն պապի տոհմի առասպելը: Հենց այս տոհմի առասպելում է Ռուբեն Հովսեփյանն ընդգծում իր պատումի բազմայուժետային առանձնահատկությունները: «Որդան կարմիր» վիպակը սյուժետային և գաղափարական առումով ուղղակիորեն կարծեն շարունակությունը լինի «Հայոց թաղ» վիպակի: «Հայոց թաղ» վիպակում Ռուբեն Հովսեփյանը նշում է, որ թաղը հիմնադրվել է 1948 թվականին. «Երկիրականի մի տուն կար և կարկատաններով մի վրան: Յոթ շունչ կար Հայոց թաղում 1946-ի ձմռանը»: [5, էջ 79] «Որդան կարմիր» վիպակում հեղինակն ընդգծում է, որ ներկայացնում է թաղն ու թաղի մարդկանց հիմնադրումից մոտ 30 տարի անց: Մի շարք հատվածներում տրվում է թաղի մեծացման, նոր բնակիչների կողմից տուն կառուցելու և թաղը մեծացնելու տեսարաններ: Ընդգծվում են նաև թաղի կազմավորման շարունակությունն ու այնտեղ Արևելյան Հայաստանի տարբեր մասերից եկած գաղթականներով բնակեցումը. «Այնինչ թաղը երեսուն տարեկան էր: Այս թաղամասը բնակեցնելիս կարծես մի փոքր Հայաստան կազմելու խաղ էին հորինել. խաղին սկզբում մասնակցում էին միայն գաղթականները, Ամերկումի մեծացրած որբերը, հետո խաղի մեջ մտան նաև արևելահայերը՝ Զանգեզուրից, Լոռուց, Շիրակից, Ջրաշանի մերձակա գյուղերից»: [5, էջ 146] Հարկ է նշել, որ գաղթականներով ու Հայաստանի տարբեր վայրերից եկած բնակիչներով Արևելյան Հայաստանի վերաբնակեցման մոտիվն առկա էր այդ ժամանակաշրջանի հայ արձակում: Դա մասնավորապես հստակ տեսնում ենք Զորայր Խալափյանի «Մեռնող-հառնող» վեպում: Վեպում Խալափյանը հատկապես խոսում է Մեծամոր քաղաքի կառուցման մասին: [1, էջ 130, 280] Ռուբեն Հովսեփյանը վերոնշյալ մեջբերմամբ ընդգծում է նաև «Հայոց թաղ» վիպակում տան նկուղում ապրող ուսուցչի՝ Հակագ Բաբայանի և աշակերտների քարտեզ-հայրենիքի մակետ պատրաստելու պատմությունը: Ի դեպ, «Որդան կարմիր» վիպակում աշխարհագրության ուսուցիչ Հայկագ Բաբայանը ևս հիշատակվում է: [5, էջ 268] «Որդան կարմիր» վիպակում Հայոց թաղի 30-ամյա գրյությունը փաստում է նաև վիպակի ավարտի թվականը՝ 1978: Երկու վիպակները սկսվում են գորգի նկարագրությամբ՝ վրան պատկերված խորհրդանշներով: Լևոն պապի տոհմական ասքի հիմքը գորգն է: Հենց գորգի վրա պատկերված խորհրդանշային պատմությունն է վիպակում բացում ու ներկայացնում հեղինակը: Գորգի խորհրդանշային պատմությանը հաջորդում է «Հայոց թաղ» վիպակի սյուժետային շարունակությունը: Հեղինակը պատմում է լարախաղաց Վարդան պապի պատմությունը, թե նրան ինչպես թաղեցին, ինչ հագուստով: Վիպակի հետագա մասերում ևս պարբերաբար Վարդան պապի կերպարը հառնում է անցյալի հիշողությամբ: [5, էջ 145, 189, 190, 294] «Որդան կարմիր» վիպակում արդեն իսկ լարախաղաց Վարդանի Արագած-Արարատ կամքային կետը փոխվում է: Զգացվում է նոր հայրենիքի՝ Արևելյան Հայաստանի իրականության մեջ ուրվագծվող սահմանային կետը: Այստեղ արդեն լարախաղացի սահմանային ջրաժանն ընդգծվում է Արաքս գետով՝ նոր սահմաններով. «Վար-

դանը պայման էր կապել. «Լարերն,-ասել էր,-կկապենք Արարսի վրա՝ ափից ափ, ու կապենք օր ու զիշեր, քանի դեռ ուժ կա պարելու»: [5, էջ 189] «Որդան կարմիր» վիպակի վերջում դարձյալ հիշտակվում է Վարդան պաղթ, սակայն այս կետում նշվում է, որ Վարդան պապի վերջին ցանկության տարածությունը կամաց-կամաց փոքրանում է: Եթե սկզբում ցանկությունն ընդգրկում էր Արագածից Արարատ, ապա հետո այն սահմանափակվեց Արաքս գետի երկու ափերով, իսկ վերջնարդյունքում նրա ցանկությունը չկատարվեց: Ցանկությունն ավելի փոքրացավ, և նա պարան կապեց ավելի փոքր տարածում. «Նա երկար լար չգտավ, որպեսզի մի ծայրը կապեր Արագածից, մյուսը Մասիսից, նրա ճարած լարը հազիվ հասցրեց իրար միացնելու հարեան բակերի թթենիները»: [5, էջ 294] Պատմական հիշողություն կրող կերպարի՝ Վարդան պապի ցանկությունը գնալով նվազում էր: Նվազման պատճառը հայրենիքի փոքրացած սահմաններն էին: Եվ սահմանային փոքրացումն ու վերջին ցանկության նվազումը հեղինակը տալիս է «Որդան կարմիր» վիպակի վերջին հատվածում: «Հայոց թաղ» վիպակի Լևոն պապի կերպարային կրողն է Լևոն պապը: Նրանք մերթ նույնանում են, մերթ տարբերվում: Սակայն տոնմական նույն իմաստության կրողներն են: Այլ կերպ ասած՝ «Որդան կարմիր» վիպակում Ռութեն Հովսեփյանը բացում է Լևոնի կերպարը, որը թեև «Հայոց թաղ»-ում կար, շարժման մեջ էր, սակայն մասնակի լրություն ու անորոշություն կար նրա շուրջը: Այստեղ արձակագիրը արդեն բոլոր սլաքներն ուղղում է դեպի Լևոն պապի պատմությանը: Երկու վիպակներում պապերը կողք կողքի են: «Որդան կարմիր» վիպակում ևս հստակ կա ժամանակի ընկալման բարդություն: Թեև հեղինակը հստակ տալիս է վիպակում թաղի ժամանակային հստակությունը, այնուամենայնիվ մոգական ռեալիզմի ժանրի բանաձևին հետևելով արձակագիրը հաճախակի կտրում է ժամանակի թելք, ու ընթերցողը երբեմն խճճվում է: Վիպակում սյուժետային գիծը պայմանականորեն կարելի է բաժանել 3 մասի՝ Լևոն պապի ընտանիքի պատմությունը Թիֆլիսում, ապա Հայաստան տեղափոխումն ու հաստատումը և տոհմի ապագա սերունդների պատմությունը: «Որդան կարմիր» վիպակում առկա է նաև «Հայոց թաղ» վիպակի սյուժետային այն գիծը, որում հեղինակը հաճախակի պատմական ակնարկ է անում, խոսում է վիպակի ժամանակաշրջանի և անցյալի պատմության մասին: Մերթ ցարական շրջանի պատմությունն է ներկայացվում, մերթ Հայաստանի խորհրդայնացումը, փետրվարյան ապստամբությունը և մերթ հայրենական պատերազմը: «Հայոց թաղ» վիպակից եկած սյուժետային այս գիծը հեղինակը պահպանում է նաև այստեղ: Մի շարք հաստվածներում ուղղակիորեն տրվում է ապագայի սերունդների քննադատությունը. «Էլի մի երկու սերունդ կանցնի, -ասել էր նա, -ու երեկի կմեռնի սրանց թռչելու բնազդը: Երգելն է կմոռանան՝ էլ ի նշ կմնա նախկին դեղձանիկից: Կղառնան հավ կամ նման մի բան, որոնք իրենց այլասերված տեսակը պահպանելու համար կշարունակեն կուտ ուտել, ձու ածել, թուխս նստել ու այսքանը»: [5, էջ 166] Դեղձանիկների պատմությամբ ընդգծվում է ապագայի սերունդների նահանջող գիծը: Պատմական արժեքների ու ազգային հոգեկերտվածքի նվազումն ընդգծվում է հենց այս կետում: Հայ մարդու դիմացի ներկայացմանը զուգընթաց արձակագիրը քննադատության հետ մեկտեղ փորձ է կատարում նաև վերացնելու մի շարք բնավորության գծեր, որոնք կործանող եղան մեր պատմության

մեջ: Լևոն պապը, որ տոհմական հատկանիշով նաև ազգայինի կրողն է, ինքն է ստանձնում պարտականությունն այդ ամենի մասին բարձրածայնելու. «Օստարի օգնությանը սպասելու մենք այնպիսի հարուստ փորձ ունենք, որ վաղուց ժամանակն է թաղել այդ զեշ սովորությունը: Թող ուշ լինի, դժվար, բայց լինի մեր ձեռքով, մեր փողով, մեր ուժով: Դա պետք է, որպեսզի մենք, որպես ազգ, վերագտնենք հավատը մեր ուժերի նկատմամբ»: [5, էջ 246] Վիպակում առկա են հայոց պատմության տարբեր ժամանակների ներկայացումն ու վիպակի կերպարների շուրթերով հեղինակի վերլուծությունը: [5, էջ 178-182] Այստեղ շարունակվում է նաև «Հայոց թաղ» վիպակում առկա հայ մարդու պատմական շրջանի, կենսագրության քննադատությունը, որը բնորոշ է Ոուրեն Հովհանքյանի արձակին: Վիպակում շարունակվում է նաև Թումանյանի տարբեր ստեղծագործությունների մեջերումն ու բանահյուսական գիծը: Դրանով պահպանվում է տոհմիկ հիշողության պատմությունը, որն առկա է մեկ տասնամյակ անց ևս: Ոուրեն Հովհանքյանը «Որդան կարմիր» վիպակում պահպանում և շարունակում է «Հայոց թաղը» ստեղծագործության այուժեն ու գաղափարը: Սակայն հարկ է նշել, որ այս երկու վիպակները որքան էլ միմյանց շարունակությունն ու լրացումն են, միևնույն դեպքում նաև իրարից անկախ վիպակներ են: Այուժետային գծերի շարունակությունը մասնակիորեն տալիս է նաև մի շարք կերպարների կենսագրության շարունակությունը: Այստեղ են Լևոն պապն ու Վարդան պապը: Այստեղ է հիշատակվում Հայկաց Բաբայանն իր գործառույթի պահպանմամբ: Այստեղ Հայոց թաղի շինարարության ավարտն է ընդգծվում, նաև պատմվում թաղի կառուցման մասին: Պատերազմի մասին պատմությունները մերթընդմերթ տեսիլք-իրականություն գեղարվեստական հնարքով հիշեցնում են իրենց մասին: Արյան խորհրդանիշն ու գույնը կենդանի են պահում վիպակի երանգը մի շարք հատվածներում: Պարբերաբար կերպարների հետ կատարվող իրադարձություններում ընդգծվում են կարմիրն ու արյունը: Խորհրդանշային համակարգում առկա է ջուրը ևս: Այստեղ արդեն պտտվում է ջրհեղեղի կործանիչ խորհուրդը: Լևոն պապի կյանքի թիֆլիսյան շրջանում առկա է ջրհեղեղի պատմությունը: Ջրհեղեղից փրկված Լևոնն իրեն նաև Նոյի հետ էր ասցացնում: Վիպակներում խորհրդանիշների կրկնությունն ու գաղափարական շարունակությունը ևս առկա են: Այն այուժետային գծի ու գաղափարական հենքի անբաժան մասն է: «Որդան կարմիր» վիպակում Լևոն պապի տոհմի պատմության այուժեն բազմաշերտ է: Այն նախ սկսվում է Թիֆլիսում ապրելու տարիների հիշատակությամբ ու նկարագրությամբ: Լևոնն իր կնոց՝ Նենեկի և ընտանիքի հետ ապրում էր Թիֆլիսում: Լևոնի երեխաներն էին Աստղիկը, Դերենիկը, Արշակն ու Սուրենը: Լևոնի կինը Նենեն մահանում է: Լևոն պապն իր հերթին տուն է բերում նաև մշեցի տղայի՝ Հրայրին, ընդունում որպես իր որդի: Լևոնի ընտանիքի պատմության անբաժան մասնիկն է նաև իր եղբայրը՝ Վահանը: Լևոնը Թիֆլիսում ուներ գրախանութ, որը հետագայում վերաբացում է նաև Հայաստանում: Թիֆլիսյան շրջանի նկարագրությամբ տրվում է տոհմական պատմության սկզբնավորումը: Տոհմական պատմության մասին խոսելով ընդգծվում է նաև տոհմին բնորոշ մահվան առկայությունը: Մահ, ինքնասպանություն, բանտ, խելազարություն, դժբախտություն սրանք վիպակի ամբողջ ընթացքում ուղեկցում են կերպարներին: Լևոնի մայրը կախվել էր, հայրը մարդասպան էր: Մահա-

նում է կինը՝ Նենեն: Տոհմի կյանքի, անցյալի, ներկայի ու դժվարությունների ներկայացումից հետո նկարագրվում է արդեն նրանց տեղափոխությունը դեպի Հայաստան: [5, էջ 150] Այս ամենի հետ մեկտեղ հարկ է նաև նշել, որ վիպակում պարբերաբար խախտվում է ժամանակը: Մասնավորապես փոփոխվում են կերպարների միջև զրույցների ժամանակները: Դա բնորոշ գիծ է մոգական ռեալիզմին, սակայն այդ ամենի հետ մեկտեղ Լևոնի կերպարը ապրում է բոլոր ժամանակների մեջ: Փոխարենը փոփոխվում են մյուս կերպարների գոյության ժամանակները: Դա բնորոշ է և՝ Ծուրբեն Հովսեփյանի արձակին, և՝ մոգական ռեալիզմի ժանրային առանձնահատկությանը: Հայաստանում հաստատվելուց [5, էջ 189] հետո սկսվում է Լևոնի տոհմի պատմության պայմանական երկրորդ մասը, որտեղ արդեն ժամանակի միջով հոսում է Լևոնի կերպարը, և պատումի դիտանկյունում կանգնում են արդեն նրա երեխաների, կամ այս դեպքում՝ հաջորդ սերնդի պատմությունը: Ինչպես «Որդան կարմիր» վիպակի ամբողջ ընթացքում Լևոնի կերպարային շունչն է նկատվում, անգամ այն էցերում, որտեղ ի սպառ բացակայում է նա, այնպես էլ աստվածաշնչյան պատմություններն ու մեջքերումներն են ուղեկցում ընթերցողին վիպակի ամբողջ ընթացքում: Լևոնն իրենով պատմականության ու կրոնական արժեքների կրողն էր: Նրա և Աստծո մտերմությունը լույս աշխարհ է գալիս պատումի տարբեր հատվածներում: Վիպակի հենց սկզբում ջրհեղեղից փրկված Լևոնը զուգահեռվում է Նոյի հետ, սակայն Թիֆլիսի կյանքին հաջորդող դժբախտությունները Լևոնին Նոյից տանում են դեպի աստվածաշնչյան Հորի մոտ: Այդ մասին հստակ արձանագրվում է: «Նա շատ էր կորցրել.... Ջրհեղեղների պատճառով իրեն Նոյ կոչող Լևոն Սիմոնյանը հետազայում, երբ արձակվել էր դժբախտությունների կծիկը, արդեն Հոր էր: Հարվածը հարվածի ետևից էր զարկվում նրա զիսին»: [5, էջ 203] Լևոնի կյանքը ջրհեղեղից հետո այլ ուղղվ գնաց: Ինքն իր վրա Նոյի սինթեզ կրող Լևոնը սկսեց Հորի կենսագրությամբ ապրել: Դժբախտությունները սկսեցին հաջորդել մեկը մյուսին: Տոհմի ողբերգության առասպել կրողն էր Լևոնը, սակայն չհանձնվողն ու պայքարը շարունակողը: Տղամարդիկ մնում են առանց կանանց: Կին տեսակն այդ տոհմում երկար չէր ապրում, իսկ տղամարդկանց ուղեկցում էր մահը կամ անձնական ողբերգությունը. «Կնոջ քաղց կա մեր արյան մեջ», - մտածեց Արշակը՝ նայելով երկաթուղային գծերի վրայից թռչող, զրադարանի ուղղությամբ փախչող Արայի ետևից և Սիմոնյան տոհմի դաժան ձակատագիրը, որպես պատճառաբանություն, փռեց իր առաջ: [5, էջ 241] Պատկերն ամբողջական է դարնում, երբ այս ամենին գումարում ենք նաև Լևոնի հոր բանտարկությունը մարդասպանության համար, որդու՝ Սամվելի մահը փետրվարյան ապատամբության ժամանակ, եղբոր՝ ինքնասպանությունը և մյուս ողբերգական իրադարձությունները: Այդ ժամանակ տոհմական գորգի պատկերը դառնում է ամբողջական: Գորգի վրա ամեն անգամ հայտնաբերված նոր նախշը նման էր Հորին հասցած նոր հարվածին: Լևոնը շարունակում էր կյանքի ընթացքում մնալ և հավատալ, որ տոհմական առաջին գերեզմանի հիմքը հենց ինքն է դնելու. «Մեր գերեզմանասոունը ինձնով է սկսվելու»: [5, էջ 251] Տոհմական ողբերգության շղթան փակվում է Լևոն պատկի մահով: Սակայն նա Հորի առաքելությունը կրեց մինչև վերջ և հաղթահարեց այն: Վիպակի վերջում Լևոնը դարձյալ Նոյի սինթեզն է կրում իր մեջ: Հաղթահարելով Հորին՝ նա վերադարձ դեպի Նոյ:

յը՝ իր իսկ բնության սկզբնակետը: Նրա մահվան մեջ կար կյանքը: Երբ բժիշկը Արշակին պատմում է, որ նրա սիրոտը նման էր մանուշակի փնչի: Ոուրեն Հովսեփյանի «Որդան կարմիր» վիպակի կենտրոնական իրադարձությունը ջրհոր փորելիս Լեռն պապի կողմից կճուճի հայտնաբերումն է: Կճուճը դառնում է վիպակի գլխավոր խորհուրդը, իսկ կճուճի ներսում գտնվող որդան կարմիրն ու դրա շուրջ ծավալվող հետագա զարգացումները դառնում են վիպակի այուժեային գլխավոր կետը: Կճուճը գտնելով՝ Լեռն պապի առաջնային արձագանքն ու խոսքն ուղղվում են դարձյալ Աստծուն: Վիպակում Լեռն պապ-Աստված անուղղակի երկխոսությունները բավական շատ են. «Տեր Աստված,-դողացին Լեռն պապի շրթները, և նրա բորբոքված երեակայությունը խցկեց կճուճի ներսը,-մի՞թէ այս կճուճով նշան ես տալիս, որ այսուհետ բարեհած ես լինելու....»: [5, Էջ 192] Առաջին էտապում Լեռնի համար կճուճը դառնում է Աստծո կողմից նշան, որ «Հորի դարաշրջանը» գուցե ավարտվում է, և սկսում է դեպի Նոյ վերադարձի շրջանը: Կճուճը դառնում է Լեռն պապի կյանքի և գոյության նոր իմաստը: Այն դառնում է խորհրդանիշը, ինչը հոսում էր վիպակի ամբողջ ընթացքում: Կճուճի բացումն ու ներսի պարունակությունը զարմացնում են բոլորին, անգամ Լեռն պապին. «Վերջապես Լեռն պապը բացեց կճուճի բերանը, անհամբերությունից դողալով ձերմակ սփոռցի վրա շուրջ տվեց պարունակությունը: Սուր կարմրավուն բրնձի հատիկի մեծության չորացած միջատները ցրիվ եկան ձերմակ սփոռցի վրա: Աչքերին չհավատալով՝ Լեռն պապը ձեռքը կճուճը խոթեց, դուրս բերեց ելի լաթերով փաթարված ձեռազիր մի զիրք: Եվ ուրիշ ոչինչ»: [5, Էջ 194] Կճուճի գտնելուց հետո հետագա էջերում հեղինակը ներկայացնում է [5, Էջ 198-203] կճուճի մեջ պահպանված ձեռազրի բովանդակությունը՝ 1800-ականների պատմություն, պատմական կերպարներ, մարդիկ, իրադարձություններ ու պատմության հիմքում ընդգծված որդան կարմիրի խորհրդանիշը: Պահպանված ձեռազրի պատմական ակնարկին զուգահեռ՝ ուրվագծվում է նաև Հայոց երկրի ու հայ մարդու ընտրյալ լինելը: Ազգային արժեքներ կրող Լեռն պապը, որն արդեն իր ձեռքում ունեցավ կճուճը, որդան կարմիրն ու ձեռազրիր, իր թոռանը՝ Արային, ներկայացնում է հայրենիքի բացառիկությունը և այնտեղ գտնվող արժեքները չփառակցելը. «Այս երկիրը, Արա,-հայտնեց նա մի անգամ իր գտած միտքը,-օրինված երկիր է: Անիմաստ, անպետք բան չկա: Եթե այս քարը անպետք է, վեր է ընկած այստեղ, նրանից է, որ մենք չզիտենք նրա զաղտնիքը: Կամ իմացել ենք ու մոռացել»: [5, Էջ 203] Ընդգծվում է օրինված երկրում ազգային արժեքներից գիտակցաբար կամ անզիտակցաբար հրաժարման իրողությունը: Արժեքում է հայրենիքում ամեն բան, որոնցում թաքնված է մեծ զաղտնիքը: Անզիտակցաբար համամարդկային մեծ արժեքը օտարին նվիրաբերելու մեր առանձնահատկությանն անդրադառնում են նաև օտար հեղինակներ: Զարկ է հատկապես նշել անզիտակցի գրող Հերբերտ Ուելսին և նրա «Խնձորը» պատմվածքը, որում հեղինակը խոսում է հայի կողմից օտարին տրվող արժեքի մասին. «-Ես գնել եմ այն մի հայից, երեք ամիս առաջ, մի բաժակ շրով ու մի կտոր հացով: Հայաստան: Այդ հրաշք երկիրը միակն է, որտեղ մինչեւ օրս պահպանվում է Նոյան տապանը՝ Արարատ լեռան սառցադաշտերի մեջ քաղված»: [8, Էջ 48] Հերբերտ Ուելսի «Խնձորը» պատմվածքում հստակ ընդգծվում է վերևում արդեն իսկ մատնանշված թեման: Լեռն պապի խրատները թոռանը առասպելի հավիտե-

նականությունն են փաստում: Վիպակում որդանի խորհրդանշիցն իր մեջ կրում է նաև միջատի պատմամշակութային արժեքը: Մասնավորապես պեսք է նշել, որ որդան կարմրի համբավն այնքան մեծ է եղել, որ Հայոց աշխարհը երբեմն անվանել են նաև Որդան կարմրի երկիր: Արաբներն իրենց հերթին Արտաշատը կոչել են Որդան կարմրի քաղաք: Հին հայերի մեջ որդան կարմրը եղել է նաև միասնության խորհրդանշից: Պատմական այս ընդհանրական գաղափարական կետերը Ռուբեն Հովսեփյանը օգտագործել և սինթեզել է վիպակում որդանի խորհրդանշային համակարգին: Լևոն պապն այդ համակարգի գտնողը, փնտրողն ու արժեքի գիտակցողն է: Վիպակի հետագա հատվածներում տեսնում ենք նաև որդերի տարածքի պահպանման, մշակման ու անզամ երկրի նախագահին գրված դիմում-նամակը, որով տարվում է արժեքի պահպանության հարցը: Պատմական ակնարկը շարունակելու և զուգահեռաբար ավարտելու համար ցանկալի է նշել նաև, որ որդան կարմրի պահպանության ու զարգացման համար խոսվել է նաև Շահամիք Շահամիքյանի կողմից 1788 թվականին հրատարակված սահմանադրության նախագծում՝ «Որոգայթ փառաց»-ում: Ժողովածուի 502-րդ հոդվածում նշվում է. «Ով շնորհ ունենա մեր Հայաստան երկրում վերականգնել կարմիր որդանը՝ ներկ պատրաստելու համար և աճեցնել լեղակ....մեկ անգամ միայն Հայոց տան կողմից պետք է շնորհի արժանանա, այսինքն՝ 10. 000 արծաթ դահեկան»: [7, էջ 208-209] Պատմական իրողության արձանագրումը վիպակում լրացնում է Լևոն պապի գաղափարական համոզմունքը: Խորհրդանշիցն կառչած լինելն ու հավատով ձեռքերի մեջ ամուր տանելը հոսում են վիպակի ամբողջ ընթացքում: «Որդան կարմիր» վիպակի վերջաբանում Լևոն պապի խոհափիլխոփայական մտքերին հաջորդում են այուժետային արագ զարգացումներն ու ողբերգական մահը: Նախքան Լևոն պապի խոհերը ազդարարվում է նրա՝ դեպի Նոյ վերադարձը. «Չուրն էլ է, ահա, այսպէս իջել,-հիացավ Լևոն պապը՝ լեռան գագարին նկարելով Նոյին»: [5, էջ 300] Խոհափիլխոփայական էջերն [5, էջ 300-303] ազդարարում են Լևոնի հավատամքը: Ընդգծում է վիպակի ամբողջ ընթացքում եղած և կուտակված իմաստությունը: Ազդարարվում է նրա կողմից Նոյի սինթեզը կրելու փաստն ու ուրվագծվում կերպարի գաղափարական ամրությունը: Ապա հաջորդում է նրա տագնապը, պատմական հիշողության դիմաց կանգնած վտանգն ու հիշողության, արժեքի պահպանման ժամանակ ողբերգական մահը. «Նա տեսավ, թէ ինչպէս պուլիկը զարկվեց մի քարի, փշուր-փշուր եղավ, և թէ ինչպէս ազ ու ձախ փախան մուզ կարմրավուն միջատները ու հողը սուզվեցին:...Նրանք բերանքսիկայր փռված Լևոն Սիմոնյանին չնկատելով, եկան, շրջապատեցին իր ծանր ու ծեր մարմինը»: [5, էջ 304]

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** «Որդան կարմիր» վիպակում Ռուբեն Հովսեփյանը որդանի խորհրդանշով ընդգծում է բարդ պատմական ժամանակաշրջանում արդեն իսկ կործանման եզրին կանգնած արժեքների պահպանման անհրաժեշտությունը: Լևոն պապն այդ արժեքների կրողն է, պահպանողն ու գոյության համար կռվողը: Տոհմական պատմության հիմքում ազգ-տոհմ զուգահեռն է: Տոհմի ողբերգական պատմությունը սոսկ տոհմական պատմություն չէ, այլ ազգային ողբերգության արձանագրում: Աերունդների պատմության համատեքստում ընդգծվում է ազգային պատմությունը: Խորհրդանշները վիպակի հիմքն են: Բազմայուժետային պատումը, սակայն, ունի ընդգծված գլխա-

վոր սյուժե և գաղափար: Ազգային-տոհմական առասպելի ներքին ծալքերում հայ մարդու հարատևման գաղտնիքներն ու բանալիներն են, որոնք տրվում են Լևոն պապի կերպարով, շուրջերով ու խոհերով, իսկ գաղտնիքը կճուծում գտնվող որդան կարմիրներն են:

### Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. **Խալափյան Զ.** «Մեղնող-հատնող», Երևան: «Անտարես»: 2023: 386 էջ:
2. Հայաստանցի 8 երիտասարդ արձակագիրներ, Բեյրութ: Տպարան «Սևան»: 1969: 311 էջ:
3. **Հովսեփյան Ռ.** «Երկար, հրաշալի օր». («Որդան կարմիր» վիպակը և պատմվածքներ), Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1980: 256 էջ:
4. **Հովսեփյան Ռ.** «Երկու վիպակ. Ճիչ, Կայոց քաղաք», Երևան: «Հայաստան» հրատ.: 1970: 172 էջ:
5. **Հովսեփյան Ռ.** «Որդան կարմիր», Երևան: «Անտարես»: 2015: 520 էջ:
6. **Մարկես Գ.** «Հարյուր տարիս մենություն», Երևան: «Հայաստան» հրատ: 1979: 447 էջ:
7. «Որոգայթ փառաց», Երևան: «Հայաստան հրատ.: 2002: 298 էջ:
8. **XX դ., արտասահմանյան արձակ,** Երևան: ԵՀ հրատ.: 1984: 573 էջ:

### R e f e r e n c e s

1. **Khalapyan Z.** The Dying and the Resurrected, [Mernox harnoxy], Yerevan, "Antares". 2023. 386 p. (in Armenian)
2. 8 young Novelists from Armenia, [Hayastanci 8 eritasard ardzakagirner], Beirut, "Sevan" Publishing House. 1969. 311 p. (in Armenian)
3. **Hovsepyan R.** A Long Wonderful Day (Armenian Cochineal Novel and Stories), [Erkar hrashali or (Vordan karmir vipaky ev patmvacner)], Yerevan. USSR Publishing House, 1980. 256 p. (in Armenian)
4. **Hovsepyan R.** Two Novels. Loud Noise and Armenian Quarter, [Erku vipak. Jich, Hayoc tagh], Yerevan. "Armenia" Publishing House., 1970. 172 p. (in Armenian)
5. **Hovsepyan R.** Armenian cochineal, [Vordan karmir], Yerevan. "Antares" Publishing House. 2015. 520 p. (in Armenian)
6. **Markes G.** One Hundred Years of Solitude, [Haryur tarva menutyun], Yerevan. "Armenia" Publishing House. 1979. 447 p. (in Armenian)
7. A trap of glory, [Vorogayt Parac], Yerevan. "Armenia" Publish. House. 2002. 298 p. (in Armenian)
8. Foreign Prose Literature of the 20th century, [XX d. artasahmalyan ardzak], Yerevan. YU Publishing House. 1984. 573 p. (in Armenian)

Հնդունվել է / Принята / Received on: **10. 10. 2024**  
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **20. 11. 2024**  
Հանձնվել է ուղ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

### Տեղեկություններ հեղինակի մասին

**Արա Սմբատի ԶԱՐԳԱՐՅԱՆ՝** ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Երևան, <<Էլ. հասցե՝ zargaryanara1994@gmail.com // orcid id: 0000-0002-0087-5232

**Ara Smbat ZARGARYAN:** Junior researcher at the Manuk Abegyan Institute of Literature of NAS, Yerevan, RA,  
e-mail: zargaryanara1994@gmail.com // orcid id: 0000-0002-0087-5232

**Արա Սմբատովիչ ԶԱՐԳԱՐՅԻՆ:** младший научный сотрудник  
Института литературы имени Манука Абегяна НАН, Ереван, РА,  
эл-адрес: zargaryanara1994@gmail.com // orcid id: 0000-0002-0087-5232